ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի կանխարգելումը Հարավային Կովկասում. աջակցություն տարածաշրջանային, ազգային և Հարավ-Հարավ նախաձեռնություններին

Իրականացման ժամանակահատված: 09.09.2020 - 08.09.2022

ԱԼԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 3 851 245

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNFPA

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

Նախագծի կայքէջ: www.unfpa.am

Նախագծի նկարագրություն:

Բազմաշերտ և բազմակողմ գլոբալ ծրագիր՝ ուղղված տղա երեխայի նախապատվության և պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելմանը: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության, Նորվեգիայի Զարգացման Համագործակցության Գործակալության (SIDA) և ՄԱԿ-ի Բնակչության Հիմնադրամի (UNFPA) աջակցությամբ: Հարավային Կովկասի տարածաշրջանում ծրագիրն իրականացվում է Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից՝ համագործակցելով կառավարությունների, ակադեմիական և հետազոտական հաստատությունների, ծառայություններ մատուցողների, քաղաքացիական հասարակության և համայնքների հետ: Ծրագրային միջամտությունները ուղղված են սեռով պայմանավորված ընտրության պատճառների և հետևանքների մասին ընդհանուր գիտելիքների ընդլայնմանը՝ անդրադառնալով սոցիալական նորմերին, որոնք խտրական վերաբերմունք են ձևավորում կանանց նկատմամբ և ավելի ցածր արժեք վերագրում աղջիկ երեխաներին:

Ակնկալվող արդյունքներ:

1. Համակարգման և վերահսկողության ուժեղացված կառավարում:
2. Ուսումնասիրված համատեքստային իրողություններ, որոնք ընկած են սեռի ընտրության հիմքում և դրա փոխկապակցվածությունը այլ վնասակար գործելակերպերի հետ:
3. Մշակված և կիրառվող փոփոխություններին հետևելու և միջամտությունների ազդեցության ցուցանիշները:
4. Բարելավված սոցիալական և մշակութային վարքագծի ձևեր, որոնք հիմնված են աղջիկ երեխայի արժևորման գաղափարի վրա:
5. Ամրապնդվում են բազմաշահառուների և բազմաոլորտային ազգային և տարածաշրջանային կարողությունները սեռի ընտրությանն ուղղված քաղաքականության և ծրագրերի քարոզչության, մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման համար: